

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N ՓՎ/15-2022

ՀՀ ՓՈՒՎԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻ ՄՈՏ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 17-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ՝ ՀՅՈՒՄԻՍ-ՀԱՐԱՎ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՄԻՋԱՆՑՔԻ, Մ-6, ՎԱՆԱՁՈՐ-ԱԼԱՎԵՐԴԻ-ՎՐԱՍՏԱՆ ՍԱՀՄԱՆ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԵՎ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ, ՔԱՂԱՔԱՅԻՆ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԵՎ ՀՅՈՒՄԻՍԱՅԻՆ ՄԻՋԱՆՑՔԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

**Քաղ. Երևան**

**Մասնակցում էին՝**

Համբարձում Մաթևոսյան	ՀՀ փոխվարչապետ
Հրայր Սարգսյան	Երևանի քաղաքապետ
Գնել Սանոսյան	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար
Վահան Քերոբյան	ՀՀ էկոնոմիկայի նախարար
Տիգրան Խաչատրյան	ՀՀ ֆինանսների նախարար
Հակոբ Սիմիդյան	ՀՀ շրջակա միջավայրի նախարար
Սուրեն Թովմասյան	ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավար
Լևոն Հովհաննիսյան	Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ
Երանուհի Թումանյանց	ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ
Քրիստինե Ղալեչյան	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ
Արթուր Մանուկյան	ՀՀ Պետական եկամուտների կոմիտեի նախագահի տեղակալ

Գոռ Ավետիսյան	«Ճանապարհային Դեպարտամենտ» հիմնադրամի գործադիր տնօրեն
Նորա Մարտիրոսյան	«Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ-ի տնօրենի տեղակալ- ծրագրի ղեկավար
Վահե Դավթյան	ՀՀ փոխվարչապետ Համբարձում Մաթևոսյանի գրասենյակի ղեկավար
Նվեր Պետրոսյան	ՀՀ փոխվարչապետ Համբարձում Մաթևոսյանի խորհրդական
Լուսինե Մարտիրոսյան	ՀՀ փոխվարչապետ Համբարձում Մաթևոսյանի մամուլի քարտուղար
Անի Ավետյան	ՀՀ փոխվարչապետ Համբարձում Մաթևոսյանի ռեֆերենտ

1. Քաղաքային կայուն զարգացման ներդրումային ծրագրի Տրանշ 2-ի շրջանակներում Երևանի քաղաքապետարանի և «Լևանտինա Ինխեսնիերիա» ընկերության միջև կնքված պայմանագրի շրջանակներում Արգավանդ-Շիրակ և Բաբաջանյան-Աշտարակ ճանապարհահատվածները միմյանց կապող Բաբաջանյան փողոցի վերակառուցման վերաբերյալ հարցի քննարկման և հաստատման մասին

---

(Նորա Մարտիրոսյան, Համբարձում Մաթևոսյան)

- 1.1. Ընդունել ի գիտություն «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ-ի տնօրենի տեղակալ-ծրագրի ղեկավար Նորա Մարտիրոսյանի զեկույցը և հաստատել Բաբաջանյան փողոցի վերակառուցման ծավալները Երևանի քաղաքապետարանի և «Լևանտինա Ինխեսնիերիա» ընկերության միջև կնքված Արգավանդ-Շիրակ ճանապարհահատվածի կառուցման պայմանագրում ներառելու առաջարկը՝ ֆինանսական ծախսերն իրականացնելով Արգավանդ-Շիրակ ճանապարհահատվածի կառուցման պայմանագրի չնախատեսված ծախսերի համար նախատեսված միջոցների հաշվին:
- 1.2. Հաշվի առնելով, որ Բաբաջանյան փողոցի վերակառուցման պարագայում Երևանի արևմտյան օղակաձև ճանապարհի միակ չվերանորոգված/չընդլայնված հատվածը կմնա Շիրակ փողոցը, որի թողունակությունը որոշ հատվածներում բավականին սահմանափակ է, ուստի հանձնարարել «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ-ի տնօրենի տեղակալ-ծրագրի ղեկավար Նորա Մարտիրոսյանին՝ Շիրակ փողոցի լայնացման/թողունակության ավելացման հարցի կապակցությամբ իրականացնել ուսումնասիրություն՝ ներառյալ խնդրի լուծման համար անհրաժեշտ ֆինանսական ռեսուրսների նախնական հաշվարկ, ինչը հնարավորության կտա հարցի հնարավոր լուծումները հետազայում քննարկելու Ասիական զարգացման բանկի հետ:
- 1.3. Ընդունել ի գիտություն ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավար Սուրեն Թովմասյանի առաջարկը Շիրակ փողոցում երթևեկության անընդհատության ապահովման և խցանումներից հնարավորինս խուսափելու համար Շիրակ փողոցի հարևանությամբ առկա հասարակական օբյեկտների սեփականատերերի հետ սկսելու բանակցություններ և այդ հատվածներում վերջիններիս կողմից մեքենաների կայանումն արգելելու վերաբերյալ:

2. Քաղաքային կայուն զարգացման ներդրումային ծրագրի Տրանշ 2-ի շրջանակներում Երևանի քաղաքապետարանի և Տիրենա Մքավի ընկերության միջև կնքված պայմանագրի շրջանակներում կառուցվող Բաբաջանյան-Աշտարակ ճանապարհահատվածում նախագծային փոփոխության իրականացման վերաբերյալ հարցի քննարկման և հաստատման մասին:

---

(Նորա Մարտիրոսյան, Համբարձում Մաթևոսյան)

- 2.1. «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ-ի տնօրենի տեղակալ-ծրագրի ղեկավար Նորա Մարտիրոսյանի առաջարկով հարցը հանվել է նիստի օրակարգից:

3. Քաղաքային կայուն զարգացման ներդրումային ծրագրի Տրանշ 1-ի շրջանակներում Իսակով-Արշակունյաց ճանապարհահատվածի ազդեցության գոտում գտնվող հողերի և գույքերի Հողի օտարման և տարաբնակեցման ծրագիրը կազմելու վերաբերյալ հարցի քննարկման և հաստատման մասին

---

(Նորա Մարտիրոսյան, Համբարձում Մաթևոսյան)

- 3.1. Ընդունել ի գիտություն «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ-ի տնօրենի տեղակալ-ծրագրի ղեկավար Նորա Մարտիրոսյանի զեկույցը Իսակով-Արշակունյաց ճանապարհահատվածի Հողի օտարման և տարաբնակեցման ծրագիրը Քաղաքային կայուն զարգացման ներդրումային ծրագրի Տրանշ 1-ի շրջանակներում կազմելու առաջարկը:
- 3.2. Հարցը հաստատել պայմանով, որ այն ևս մեկ անգամ աշխատանքային կարգով կքննարկվի ՀՀ փոխվարչապետ Համբարձում Մաթևոսյանի մոտ՝ ծրագրի իրագործման ճշգրիտ մեթոդաբանությունը հասկանալու նպատակով:
- 3.3. ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար Գնել Սանոսյանին, ՀՀ էկոնոմիկայի նախարար Վահան Քերոբյանին, ՀՀ արդարադատության նախարար Կարեն Անդրեասյանին և ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավար Սուրեն Թովմասյանին՝ մեկամսյա ժամկետում մշակել ընդհանուր գույքերի իրացման ռազմավարություն այն ծրագրերի վերաբերյալ, որոնց նախնական պլանավորումը ենթադրում է արտաքին դոնորների կողմից ֆինանսավորում:

4. Քաղաքային կայուն զարգացման ներդրումային ծրագրի Տրանշ 2-ի շրջանակներում գնումների պլանում «Տրանշ 3-ի տեխնիկատնտեսական հիմնավորումներ և Երևանի տրանսպորտային մոդելի մշակում» խորհրդատվական ծառայություններ նախատեսող տողերը հանելու և վերանայված գնումների պլանի քննարկման և հաստատման մասին

---

(Նորա Մարտիրոսյան, Համբարձում Մաթևոսյան)

4.1. Ընդունել ի գիտություն «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ-ի տնօրենի տեղակալ-ծրագրի ղեկավար Նորա Մարտիրոսյանի զեկույցը Քաղաքային կայուն զարգացման ներդրումային ծրագրի Տրանշ 2-ի շրջանակներում գնումների պլանում «Տրանշ 3-ի տեխնիկատնտեսական հիմնավորումներ և Երևանի տրանսպորտային մոդելի մշակում» խորհրդատվական ծառայություններ նախատեսող տողերը հանելու ու վերանայված գնումների պլանի վերաբերյալ:

4.2. Հաստատել Քաղաքային կայուն զարգացման ներդրումային ծրագրի Տրանշ 2-ի վերանայված գնումների պլանը:

5. Քաղաքային կայուն զարգացման ներդրումային ծրագրի իրականացման մասնագետների խմբի հաստիքացուցակի և դրույքաչափերի փոփոխության վերաբերյալ հարցի քննարկման և հաստատման մասին

---

(Հրայր Մարգարյան, Համբարձում Մաթևոսյան)

5.1. Հաստատել «Երևանի կառուցապատման ներդրումային ԾԻԳ» ՀՈԱԿ-ի Քաղաքային կայուն զարգացման ներդրումային ծրագրի իրականացման մասնագետների խմբի նոր հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ աշխատավարձերն ավելացնելով 20%-ով:

5.2. Ֆինանսների նախարար Տիգրան Խաչատրյանին՝  
Ընդունել ի գիտություն ՀՀ փոխվարչապետ Համբարձում Մաթևոսյանի առաջարկը այն մասին, որ հետագայում աշխատավարձի ֆոնդին վերաբերող հարցերի ռազմավարությունը մշակելիս պետք է առանձնացնել աշխատաշուկայում առավել կարևոր և պահանջարկ ունեցող մասնագիտությունները:

6. Քաղաքային կայուն զարգացման ներդրումային ծրագրի Տրանշ 1-ի շրջանակներում Երևանի քաղաքապետարանի «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ-ի և «Էջիս Ինթերնեյշնլ» ընկերության միջև կնքված պայմանագրի թիվ 28 փոփոխության հարցի քննարկման և հաստատման մասին

---

(Նորա Մարտիրոսյան, Համբարձում Մաթևոսյան)

6.1. Հաստատել Երևանի քաղաքապետարանի «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ-ի և «Էջիս Ինթերնեյշնլ» ընկերության միջև կնքված պայմանագրի թիվ 28 փոփոխությունը՝ ընդհանուր 84,596.0 ԱՄՆ դոլար և 112,799.0 Եվրո գումարի ավելացմամբ և մինչև 2022 թ. մայիսի 31-ը Պայմանագրի ժամկետի երկարաձգմամբ, և հանձնարարել «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ-ին կնքելու Պայմանագրի թիվ 28 փոփոխությունը:

ՀՀ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ

ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ